



Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ծ

Բ Ա Ձ Մ Ա Վ Ի Պ Ի 1897 Ա Պ Ր Ի Լ Ի Թ Ե Ր Թ Ի Ն



Ծ Ա Գ Ո Ւ Մ Ն Հ Ա Յ Տ Ա Ռ Ի Ց



Առ տխար Ն. Տադաւարեան,



պատասխանի Ձեր 26|10 Մարտ առ իս ուղղած պատուականին՝ կը փութամ յայտնել, թէ մինչեւ ցարդ ձեր «Ծագումն Հայ տառից» երկին վրայ քննադատութիւն մի «Բազմավիպի» մէջ չգրելուս գլխաւոր պատճառն էր ուրիշ ուսումնասիրութեամբ դարդուիլս. երկրորդ, անոր հեղինակին կերպով մի տհաճութիւն չի պատճառելու նախազգուշութիւնն: Բայց որովհետեւ Դուք պնդուաբար կը կամիք մեծ արժէք տալ նուաստիս քննադատութեան եւ ձեր երկի մասին իմ կարծիքն իմանալ, ուստի եւ ես նովին վստահութեամբ կը համարձակիմ համառօտիւ հաղորդել Ձեզ իմ տեսութիւններս «Բազմավիպի» միջոցով: Ձեր ուսումնասիրութեան համար ըրած նիւթոյն ընտրութիւնն, հայկական տառից ծագման եւ գիւտի մասին յարուցած բազմակողմեան հարց ու պատասխանիքն, հին եւ նոր հեղինակաց այլ եւ այլ լեզուներով գրուածներն մի առ մի ընթեռնելու անյազ տենչն եւ տոկունութիւնը, անոնց ամենուն կարծեաց տարան հանելով՝ մէկ տեսրի մէջ համաօտելն՝ մէկ կողմէն. իսկ միւս կողմէն՝ նորանոր տեղեկութեամբք նշանագրոց պատմութեան այս ինչ կամ այն մութ կէտերը լուսաւորելն, անտարակոյս ձեռնարկած նիւթոյն ձեռնահասութիւն կը պահանջեն եւ մեծ աշխատութիւն: Դուք յայտ՝ ամենայնի, — ինչպէս եւ «Հայ տառի» հեղինակն, — ընդ հանրապէս միւս գրողներէն աւելի բաղդաւոր էք. եւ ձեր այս երկասիրութիւնն՝ ապագայ ուսումնասիրաց մատուցած դիւրութեան եւ ծա-

ւայութեան համար, պէտք է ըսել, թէ է եւ պիտի լինի գնահատելի:

Իսկ գալով հայկական տառից ծագման եւ պատմութեան վերաբերեալ առանձնական տեսութեանց, թող ներուի ինձ ըսել, թէ ուրեք ուրեք մէջ բերուած ապացոյցները տակաւին դրական եւ գոհացուցիչ ըլլալէ հետի կ'երեւին ինձ. վասն զի ոչ միայն իսկապէս անոնցմով լուծուած եւ պարզուած չեն այն բազմակնձիւն հանգոյցներն, որոնք դարերը յոյնացուցած են, այլ հանձարեղ ենթադրութիւններով՝ Պրոտեւսէն աւելի եւս այլափոխուած են, ըստ իս, երբեմն. հետեւաբար ձեր յայնժամու ուսումնական կացութիւնը չէր ներեր ամեն բան ըստ արժանւոյն քննել եւ դատել:

Ձեր երկասիրութեան Յառաջարանի մէջ արտայայտուած կարծիքն, ճիշդ թէ անճիշդ, աւելի պարզ է եւ հասկանալի, քան թէ յընթացս գործոյն բարգաւաճեալ ապացուցութիւնքն, որոնք երբեմն դժուարութեանց ժայռերու կ'ընդհարուին, եւ երբեմն անոնցմէ խուսելու համար՝ կ'արտուղին եւ հնութեան անորիչ սահմաններուն վրայ կը թուին յածիլ եւ կոծիլ:

Յէջ 7, ուր իբրեւ նախապատրաստութիւն զանիւլեան նշանագրոց՝ կը խօսուի փիւնիկեան այբուբենի Քրիստոսէ Ժ դար յառաջ եղած գիւտին եւ յաջորդաբար սեմական եւ տուրանական ազգաց մէջ գործածական դառնալու մասին, ընդունուած է իբրեւ պատմականօրէն ապացուցուած մի ճշմարտութիւն, թէ «անշուշտ Հայք եւս այն գրերով մշակեցին իւրեանց գրականութիւնը, փոխելով զայնս փոքր ինչ ըստ պահանջի իւրեանց լեզուին»: Սակայն դիտել կու տամ առ այս, որ ոչ սեպածեւ արձանագրութեանց